

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran” Benevolent
Fund express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

HAYK HAMBARDZUMYAN

**THE “DAREDEVILS OF SASSOUN”
IN THE PERIOD OF INDEPENDENCE**

The Armenian epic in contemporary Armenian literature and in the
social discourse

Yerevan – 2021

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АЙК АМБАРЦУМЯН

**«САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»
В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ**

Армянский эпос в современной армянской литературе и в
социальном дискурсе

Ереван – 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԸ»**

Էպոսը հայ արդի գրականության մեջ և
հանրային դիսկուրսում

ԵՐԵՎԱՆ – 2021

ՀՏԴ 398
ԳՄԴ 82
Հ 205

*Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ
ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհով*

*Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝ Վարդան Դևրիկյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Համբարձումյան Հ.

*Հ 205 Անկախության «Սասնա ծռերը» / Հայկ Համբարձումյան.- Եր.:
«Մատենադարան» հրատ., 2021.- 184 էջ:*

*Անկախության շրջանում հայ գրական ու հանրային միտքն ընդգծված
հետաքրքրություն է դրսևորում հայ վիպական բանահյուսության, մաս-
նավորապես հին առասպելների ու «Սասնա ծռերը» էպոսի նկատմամբ:
Այդ հետաքրքրությունն արտահայտվում է ոչ միայն գեղարվեստական
բնագրերում, այլև գրական-հանրային տարբեր քննարկումներում ու հա-
սարակական-քաղաքական կյանքում: Գրքում ներկայացվում, քննարկ-
վում և վերլուծվում են էպոսի՝ գրական, մշակութաբանական, փիլիսոփա-
յական ու քաղաքական ընթերցումները: Այս անդրադարձները թեև տար-
բեր են իրենց բնույթով ու նպատակներով, սակայն ընդհանուր ժամանա-
կի ծնունդ լինելով՝ արտացոլում են անկախության շրջանի հայ իրակա-
նությունների գաղափարական հիմնական միտումները:*

ՀՏԴ 398
ԳՄԴ 82

ISBN 978-9939-897-02-8

© Հայկ Համբարձումյան, 2021

© Մաշտոցյան Մատենադարան, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻԲՐԵՎ ՍԿԻՉԲ 7

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍՆ ՈՒ ՀԱՅ ԱՐԴԻ ԱՐՁԱԿԸ 21

Ա. Անկախության շրջանի արձակն ու հին առասպելները 23

Բ. Ազգային էպիկական ավանդության մինչև
20-րդ դարի գրական (նեո) միֆոլոգիզմ 25

Գ. Տիպականացում և ամբողջական վերընթերցում.
փակո՞ւղի, թե՞ նոր իմաստավորում 27

Դ. Միերը՝ օտարված հերոս կամ փրկիչ 34

Ե. Ապառաասպելականացում 38

Չ. Էպոսից՝ վեպ 40

Է. Հին գանձեր և նոր առաջնորդ 45

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԷՊՈՍԸ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ 47

Ա. Ազոավաքարի դռները թակելով 49

Բ. Փոքր Միերը ազգային զարթոնքի խորհրդանիշ.
պատերազմից՝ երկրագործություն 58

Գ. Փոքր Միերն ու ժողովրդական պայքարը.
ժողովրդի հետ, ժողովրդի նման 68

Դ. Փոքր Միերն ու արցախյան ազատամարտը.
Դավիթ Հովհաննեսի «Փոքր Միեր և Դավիթ Տարեգիր»-ը 72

Ե. Հայոց նախապատմական էպոսի որոնումները.
Ռազմիկ Դավոյանի «Ծովինարը» 78

ՄԱՍ ԵՐՐՈՐԳ

**ԷՊՈՍԸ ՀԵՏԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ**

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ 87

Ա. Էպոս՝ քաղաքական. Էպոսը որպես ազգային գաղափարախոսություն ու ազգային ծրագիր	89
Բ. Արիականք ու վտարանդի Ալեքսանդր Վարպետյանը	94
Գ. Յուրաքանչյուրին ըստ բնական շնորհքի. Օլեգ Բարայանն ու 5 ասացողները	108
Դ. Ճարտարապետ-շինարար-Էպոսագետ-հանցագործ թեկնածուն կամ «Վերևում Աստված կա»	114
Ե. Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա	124
Զ. «Սասնա ծռեր» խմբավորում՝ կուսակցություն. խենթե՛ր, թե՛ քաջեր	129
Է. Ազոավաքարի բարդություն: Մշակութաբանական-փիլիսոփայական ընթերցումներ. Մհերը՝ տրիքստյոթ	150
Ը. Ազոավաքարը՝ որպես հայկական մշակութակերպի միջուկ. մշակութաբանական զբոսանք Մհերի քարայրում	156

ԱՄՓՈՓԵԼՈՎ 162

ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 164

«Сасунские Удалыцы» в период независимости (резюме) 171

The “Daredevils Of Sassoun” in the Period Of Independence (summary) 177

ԻՔՐԵՎ ՍԿԻՉՔ

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» ժողովրդական, հերոսական էպոսը, դյուցազներգությունը, առաջին անգամ գրառվել է 1873 թ.: Հետագա շուրջ 150 տարիները եղել են էպոսի նկատմամբ հասարակական հետաքրքրության ու գիտական ուսումնասիրության վերելքի տարիներ: էպոսը գրավել ու գրավում է ուսումնասիրողներին ու ընթերցողական լայն շրջանակին իր առասպելական հնագույն շերտերով, պատմական արձագանքներով և հայ ժողովրդի կյանքի կենդանի պատկերներով: Մյուս կողմից հետաքրքիր ու առինքնող է էպոսի կերպարների հերոսական ոգին, ընդհանրապես «Սասնա ծռերի» գաղափարաբանությունը: Կինելով ընդգծված ազգային երևույթ, էպոսը միաժամանակ շատ ընդհանրություններ է դրսևորում համաշխարհային էպիկական ավանդության հետ: Ըստ այդմ էլ՝ «Սասնա ծռերը» հայտնի ու սիրված է ոչ միայն մեզանում, այլև միջազգային հայագիտական, ընդհանրապես բանագիտական շրջանակներում: Չնայած ճանաչման ու ուսումնասիրության շուրջ մեկ և կես դարյա ընթացքը, այս ընդգրկուն ստեղծագործության հետ կապված բազում հարցեր դեռևս չեն գտել իրենց պատասխանները: Այսպես, դեռևս հստակեցման կարիք ունեն «Սասնա ծռերի» ստեղծման ժամանակի և տարածման ճանապարհների, առասպելական հնագույն արմատների, հայ միջնադարյան գրական ավանդույթի ու համաշխարհային էպիկական ժառանգության հետ կապերի բազմաթիվ խնդիրներ:

էպոսն իր նշանակությամբ ու հետագա գրական անդրադարձներով ու ազդեցությամբ բացառիկ է մեր գրական-մշակութային կյանքում: Տարբեր ժամանակներում էպոսի նկատմամբ վերաբերմունքն ունեցել է իր առանձնահատկությունները, ինչն արտացոլվել է «Սասնա ծռերին» նվիրված գիտական ուսումնասիրություններում, արվեստի ստեղծագործություններում և հասարակական դիսկուրսում: էպոսի նկատմամբ հե-

տաքրքրությունը տևական է, սակայն յուրաքանչյուր ժամանակ ունի իր էպոսը, դյուցազներգության իր ընկալումը:

Այսօր էլ շարունակվում է էպոսի ակտիվ ներկայությունը մեր կոլեկտիվ մշակութային գիտակցության մեջ, ժամանակ առ ժամանակ ակտիվանալով՝ նոր դրսևորումներ ստանալով հասարակական, նույնիսկ քաղաքական կյանքում:

Հնդունված է, որ էպոսը վերջնական ձևավորվել է 9-12-րդ դարերում, սակայն մինչ 19-րդ դարի երկրորդ կես շունենք դյուցազներգության որևէ գրառում: «Սասնա ծռերի» որոշ մոտիվներ հանդիպում են 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդների նոթերում և այլ աղբյուրներում:

Առաջին պատումը գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը՝ 1873 թվականին Մշո Առնիստ գյուղում՝ տարոնցի Կրպոյից, իսկ երկրորդ պատումը՝ Մանուկ Աբեղյանը՝ 1886 թվականին էջմիածնում՝ մոկացի Նախո քեռուց:

Հետագայում՝ մինչև 1970-ական թվականները գրառվել է էպոսի շուրջ 160 տարբերակ: Դրանք թեև ծագումով Արևմտյան Հայաստանից են՝ Մոկս, Մուշ, Վան, Ալաշկերտ, Սասուն, սակայն մեծ մասամբ գրի են առնվել Արևելյան Հայաստանում՝ էջմիածնում, Երևանում, Թալինում, Սևանա լճի ավազանում՝ Մարտունի, Վարդենիս և այլուր:

Պատումները դասակարգվում են ըստ լեզվական-բարբառային պատկանելության, ճյուղային կառուցվածքի, մոտիվների և կերպարների: Հստ այդպիսի ունենք երեք խմբի՝ Մշո, Մոկաց և Սասնո պատումներ:

էպոսի պատումների մեծ մասը հրատարակվել է հինգ մեծադիր հատորներում (1936 թ., 1944 թ., 1951 թ., 1979 թ., 1999 թ.): Այս ժողովածուների վերնագիրն է՝ «Սասնա ծռեր», ի տարբերություն 1939 թվականին՝ 60 պատումների հիման վրա ստեղծված համահավաք բնագրի՝ «Սասունցի Դավիթ» վերնագրի: Այս վերնագրի ընտրությունը պայմանավորված էր ինչպես էպոսի կենտրոնական հերոսի անունով, այնպես էլ ծուռ բառը այլ լեզուներով թարգմանելու դժվարությամբ:

Բանավոր տարբերակներից բացի, էպոսի հանրային ընկալումների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել ու պայմանավորել հետագա գրական-մշակութային շրջանառությունը՝ «Սասնա ծռերի» մշակումները: Հատկապես մեծ է Հովհաննես Թումանյանի՝ «Սասունցի Դավիթ» (1903 թ.), Եղիշե Չարենցի «Սասունցի Դավիթ» (1933 թ.), Ավետիք Իսահակյանի «Սասնա Մհեր» (1938 թ.) պոեմների և Նաիրի Զարյանի «Սասնա Դավիթ» վիպակի (1966 թ.) ազդեցությունը:

Բայց հայ հանրությունը էպոսն առաջին հերթին գիտի 1939 թվականին կազմված համահավաք բնագրով: էպոսի այդ բնագիրը, թեև գրեթե ամբողջությամբ արտահայտում է «Սասնա ծռերի» էությունը, սակայն այն կազմվել է խորհրդային շրջանում, վերևից պարտադրված գաղափարական որոշակի սկզբունքներով և 60 պատումների հիմքի վրա՝ գնալով հատկանիշների խմբավորման ու ընդհանրացման ճանապարհով, իսկ հետագա տասնամյակներում էպոսի այլ պատումներ ևս գրավել են, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Անհրաժեշտ է նշել, որ էպոսին անդրարդարձող ժամանակակից գրողները, բացառությամբ Լևոն Խեչոյանի, իմ տպավորությամբ, էպոսին ծանոթ են հենց այս բնագրով, նաև Հովհաննես Թումանյանի գրական մշակմամբ, որոնք ամբողջությամբ չեն արտահայտում հայկական էպոսի բոլոր առանձնահատկությունները:

էպոսի բոլոր պատումներն ունեն 1-4 ճյուղ: Առաջին ճյուղում երկվորյակ եղբայրներ Սասնասարն ու Բաղդասարը հիմնում են Սասուն բերդ-քաղաքը: Երկրորդ ճյուղի հերոս Մեծ Մհերը հզորացնում է Սասունը, հաղթում առյուծին: Երկու որդի է ունենում՝ թշնամի Մսրա Մելիք և յուրային հերոս Դավիթ: Երրորդ ճյուղում Մելիքը ցանկանում է հարկեր հավաքել Սասունից, սակայն Դավիթն ընդվզում է և հաղթում նրան: Չորրորդ ճյուղի հերոս Փոքր Մհերը գժտվում է հոր հետ, արժանանում անեծքի և դառնում անմահ ու անժառանգ: Ապա հերոսը փակվում է Ագռավաքար կոչվող քարայրում և վերադարձի պայմաններ դնում. «Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի, / Երոր ցորեն էղավ

քանց մասուր մի, / Ու գարին էղավ քանց ընկուզ մի»։ Այլ տարբերակներում հերոսը խոստանում է վերադառնալ Քրիստոսի երկրորդ գալստին։

Գաղափարական առումով մեր էպոսն ամփոփում է անհատի ու հասարակության զարգացման տարբեր փուլերը՝ ծնունդ-արարում-աստվածային, կայացում-ամրացում-իշխանություն, պաշտպանություն-զինվոր-հերոսականություն, անկում-հեռացում-հավերժական կյանք կամ համապատասխան էպիկական մոտիվներով՝ բնակության վայրի ստեղծում, հանրույթի կայացում, իշխանության ամրացում, պայքար ինքնուրույն գոյության համար, հեռացում ու հերոսի վերադարձի սպասում։

Վերոհիշյալ գաղափարական ընդգրկումները, առասպելական մոտիվները, կերպարների՝ աստվածային-հերոսական-մարդկային անցումները, հետաքրքիր են դարձնում էպոսը անկախության շրջանի գրականության համար։ Միաժամանակ հանրային միտքն ընգծված հետաքրքրություն է ցուցաբերում հայ վիպական բանահյուսության նկատմամբ ընդհանրապես։ Այդ հետաքրքրությունն արտահայտվում է ոչ միայն գեղարվեստական բնագրերում, այլև երևան գալիս գրական-հանրային տարբեր քննարկումներում, նաև դրսևորվում հասարակական-քաղաքական կյանքում։

Հին առասպելներին ու «Սասնա ծռեր» էպոսին անդրադարձներ կարելի հանդիպել դեռևս խորհրդահայ գրականության մեջ։ Զորայր Խալափյանի, Խաչիկ Դաշտենցի, Մուշեղ Գալշոյանի, Հրանտ Մաթևոսյանի, Աղասի Այվազյանի, ինչպես նաև բազմաթիվ բանաստեղծների ստեղծագործություններում կարելի է գտնել համապատասխան կիրառություններ, սակայն դրանք ավելի հաճախ սահմանափակվում էին ոճավորմամբ, ստեղծագործության գեղարվեստական աշխարհի ու միջավայրերի՝ էպիկական բանահյուսության գեղարվեստական արտահայտության միջոցներով տիպականացմամբ։ Անկախության շրջանում էպիկական բանաստեղծությանն անդրադարձները մասնակիորեն շարունակելով նյութի կիրառության ավանդական սկզբունքները՝ նաև այլ նպատակ ու դրսևորումներ ունեցան։

Մասնավորապես, «Սասնա ծռեր» էպոսին, այն կազմող վիպական մոտիվներին, կամ դրանց հիմքում տեսանելի առանձին առասպելություններին բազմաթիվ հղումներ, ուղղակի մեջբերումներ, հիշատակություններ կան Լևոն Խեչոյանի վեպերում, վիպակներում և տարբեր պատմվածքներում, Արմեն Մարտիրոսյանի, Գուրգեն Խանջյանի, Հովիկ Վարդումյանի վեպերում: Բանաստեղծներ՝ Սիլվա Կապուտիկյանի, Համո Սահյանի, Ռազմիկ Դավոյանի, Դավիթ Հովհաննեսի, Հրաչյա Բեյլերյանի և այլոց ստեղծագործություններում:

Անկախությունից հետո ծավալվում են ազգային գաղափարախոսություն ստեղծման շուրջ քննարկումներ, որոնցում գրեթե միշտ «Սասնա ծռերը» դիտվում է որպես այդ գաղափարախոսության հիմնասյուն: Ազգային էպոսին հղումներ կարելի է հանդիպել քաղաքական գործիչների ուղերձներում ու ելույթներում, կուսակցությունների ծրագրերում, մշակութաբանական, հասարակագիտական, փիլիսոփայական բնագրերում: Մասնավորապես, էպոսի մեկնաբանություններով, արդիականացման փորձերով ու որպես ազգային գաղափարախոսություն օգտագործելու առաջարկներով հանդես են գալիս Ալեքսանդր Վարպետյանը, Օլեգ Բաբայանը և այլք: 2000-ականներին էպոսի շուրջ քննարկումները նոր թափ են ստանում իրեն էպոսագետ հռչակած Վարդան Սեդրակյանի հոդվածներում, հարցազրույցներում և ելույթներում:

2016 թվականից մինչ օրս էպոսը հասարակական-քաղաքական կյանքում շրջանառվում է կապված «Սասնա ծռեր» խմբավորման գործունեության հետ:

Արդյո՞ք էպոսի նկատմամբ այս հետաքրքրությունը ինքնահատուկ երևույթ է, բնորոշ միայն հայ հանրային-քաղաքական դիսկուրսին և պայմանավորված է մեր՝ էպոսի նկատմամբ սիրով, թե՞ ընդհանրապես բնութագրական է հետխորհրդային երկրներին: Արդյո՞ք սա վերևից իջեցված պատվեր է, ուղղված օրվա իշխանությունների դիրքերի գաղափարական ամրապնդմանը, թե՞ ինքնաբուխ ժողովրդական ու մշակութային իրացում, որի նպատակն է ազգային ինքնության ճանաչողությունն ու պահպանությունը, երկրի հոգևոր ու քաղաքական

զարթոնքը: Հարցեր, որոնք մեզանում երբեք չեն քննարկվել, սակայն կարևոր ու արդիական են մեր վերջին երեք տասնամյակների իրականության ընկալման ու ներկայացման համար:

Այս ուսումնասիրության գաղափարը ձևավորվել է մոտ տասնհինգ տարի առաջ, երբ ավարտում էի թեկնածուականատենախոսությունս, որը նվիրված էր «Սասնա ծռեր» էպոսի բանավոր տարբերակների տիպաբանությանը: Միաժամանակ ընթերցում և քննադատական հոդվածներով անդրադառնում էի հայ արդի արձակին: Եվ ինչ-որ մի պահ իմ ուսումնասիրությունները զուգահեռվեցին, և ես անդրադարձա, որ թեև էպոսը ահռելի ազդեցություն ունի մեր գրական-մշակութային-հանրային կյանքում, սակայն այդ ազդեցությունը ոչ թե էպոսի գիտական կամ գոնե մերձգիտական ճանաչողությունից է գալիս, այլ էպոսի շուրջ ստեղծված առասպելներից, խորհրդային շրջանի գաղափարական կաղապարներից, ինչ-ինչ գաղափարական խտացումներից, շատ հաճախ ուղղակի վերագրումներից: Այսինքն, նույնիսկ այն գրողները, քաղաքական ու մշակութային գործիչները, որոնք ինչ-որ կերպ անդրադառնում են էպոսին, «Սասնա ծռերի» մասին բավական մակերեսային պատկերացում ունեն, չեն առնչվել էպոսի բնագրերի հետ, այլ ավելի հաճախ վերարտադրում են էպոսի շուրջ հյուսված տարբեր պատկերացումներ:

Բանն այն է, որ երբ ծանոթանում ես էպոսի բանավոր տարբերակներին, դրանց գեղարվեստական ու գաղափարական բազմազանությանը, շատ դժվար է, առանձնացնել մեկ կամ երկու գաղափար և էպոսի ընկալումն ու մեկնաբանությունը հանգեցնել դրանց, ըստ էության պարզունակացնել ու միագիծ դարձնել էպոսը, ինչպես հաճախ կարող ենք տեսնել: Այս տեսանկյունից ուշագրավ է Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» վեպի օրինակը: Լ. Խեչոյանը միակ հեղինակն է, որ հնարավորինս լրջությամբ է վերաբերվել էպոսի իր անդրադարձին, կարդացել է «Սասնա ծռերի» պատումներն ու էպոսագիտական ուսումնասիրությունները: Սակայն աղբյուրներին ու տեսական գրականության ծանոթացումը, ըստ մեզ, ինչ-որ չափով խան-

գարել է հեղինակին, դժվարացրել նրա աշխատանքը: Եվ ինչպես կտեսնենք ստորև, ստիպել նրան այլ կերպ կառուցել վեպը, ստեղծել նոր կերպար և այլն:

Նույնը կարող ենք տեսնել բանաստեղծների ստեղծագործություններում, կամ քաղաքական ու հասարակական գործիչների բնագրերում: Կա էպոսի մի քանի հիմնական գաղափարմոտիվ, որոնք անընդհատ շահագործվում են, սակայն չկա էպոսի քիչ թե շատ ամբողջական ընկալում:

Օրինակ, սիրված և տիրաժավորված են էպոսի երրորդ ճյուղի՝ «Ով քնած է՝ արթուն կացեք, ով արթուն է՝ ձիեր թամբեք» տողերը: «Սասնա ծռեր» էպոսի կենտրոնական միջադեպերից մեկի այս հատվածը, որտեղ Սասունցի Դավիթը հարձակումից առաջ զգուշացնում է քնած թշնամուն, հայտնի է նույնիսկ էպոսն ամբողջությամբ չկարդացած ու չուսումնասիրած մարդկանց: Սասունցի Դավիթի վեհանձնությունը, կովին անպատրաստ թշնամու նկատմամբ հարգանքն ու արդիական ձևակերպումներով՝ հանդուրժողականությունը խորհրդանշող այս տողերը էպոսագիտական գրականության մեջ, ազգային-գաղափարական տարբեր դիսկուրսներում ու նույնիսկ կենցաղային զրույցներում ավանդաբար վկայակոչվում են մեր հերոսների, ավելի ընդհանուր, հայ ժողովրդի խաղաղասիրությունը, ազգային-բարոյական բարձր արժանիքները փաստելու, միաժամանակ, սրան հակադիր՝ թշնամու նենգությունը, խաբեությունը ու ստորությունը հաղթանակի հասնելու ձգտումները ցույց տալու համար: Ընդ որում, այնպես է ստացվում, որ թշնամու նկատմամբ վեհանձնության այս և մի քանի այլ դրսևորումների ցուցումով, որպես կանոն, խիստ հակադրություն է ստեղծվում յուրային ու հակառակորդ հերոսների միջև, այդ հակադրությունը դրվում է ազգային կամ կրոնական հիմքերի վրա, թեև էպոսում դա այդքան էլ հստակ չէ:

էպոսի ու էպիկական հերոսների վրա դրվող գաղափարական մեծ ծանրաբեռնվածության պատճառով էլ մենք իդեալականացնում ենք յուրային հերոսներին, առանձնացնում միայն այն մոտիվները, որտեղ նրանք դրսևորվում են բարոյական

բարձր հատկանիշներով և չենք անդրադառնում միջնադարին ու էպիկական հերոսական գրականությանը բնորոշ, սակայն ժամանակակից էթիկայի տեսանկյունից ոչ գրական համարվող շատ մոտիվների, որտեղ մեր հերոսների արարքները միանշանակ գնահատել չի կարելի:

Նույն մոտեցումները նկատելի են նաև լայն ընթերցողին ավելի քիչ հայտնի հայ միջնադարյան պատմագիրներ՝ Փավստոս Բուզանդի և Հովհան Մամիկոնյանի երկերի միջոցով մեզ հասած, բանագիտական գրականության մեջ որպես ավանդավեպեր բնութագրվող՝ «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» ստեղծագործությունների նկատմամբ: Մենք վկայակոչում ենք «Պարսից պատերազմի»՝ Մուշեղ Մամիկոնյանի՝ Շապուհ թագավորի կանանց վերադարձնելու մոտիվը, այն դեպքում, երբ այդ գրվագից առաջ ու հետո Մուշեղը վրեժխնդիր է լինում հոր սպանության համար և հաշվեհարդար է տեսնում թշնամու նկատմամբ: Նույն կերպ, գրեթե չգիտենք կամ չենք անդրադառնում «Տարոնի պատերազմ» ավանդավեպում Մամիկոնյան հերոսների ու հատկապես Գայլ Վահանի դաժանությանը:

Պատճառն այն է, որ էպոսը կամ վիպական-պատմական պատումները դիտարկվում են առավելապես որպես հայրենասիրական պատմություններ, երբեմն՝ գաղափարախոսություններ ու նույնիսկ «Աստվածաշունչ»: Հերոսներն ընկալվում են որպես բացառիկ ազգային կերպարներ, առաջնորդներ, սրբազան նախնիներ, երբեմն էլ՝ նահատակներ: Գրեթե չի գիտակցվում այն հանգամանքը, որ ազգային բնավորության առանձնահատկություններից զատ, էպիկական ստեղծագործություններում կան առասպելական հնագույն շերտեր, ընդհանուր մոտիվներ ու կերպարակերտման սկզբունքներ, որոնք տեսանելի են նաև այլ ժողովուրդների էպիկական պատումներում:

Մեր վիպական բանահյուսական ստեղծագործությունների թեմատիկ-գաղափարական այս դրսևորումները պայմանավորված չեն միայն ազգային բնավորության յուրահատկություններով, ըստ այդմ էլ քննության առարկա են միջնադարյան աշխարհայացքի, պատմիչների ու ասացողների վերաբերմունքի,

ընդհանրական մոտիվների ու հերոսների կերպարակերտման սկզբունքների հետ կապված բարդ խնդիրներ:

Ընդհանրապես, մեր էպոսի արդի հանրային ընկալումը, որն արտահայտվում է ոչ միայն տարբեր տեքստերում այլև ամենաբազմազան նկարագարողումներում, քանդակներում և էպոսի հերոսների արձաններում, ձևավորվել է հորհրդային շրջանում, մասնավորապես 1939 թվականին, երբ մեծ շուքով նշվեց էպոսի 1000-ամյակը: Այդ նաև նախորդող ու հաջորդող տարիներին գաղափարական իշխող մտայնություններով ու էպոսագիտական պատկերացումներով հայ և օտարազգի ուսումնասիրողների կողմից սահմանվեցին էպոսի գնահատման որոշակի՝ հիմնականում բարոյական չափանիշներ: Ըստ այդմ էլ՝ առանձնացվեցին ու տարածվեցին այն մոտիվները, որտեղ էպոսի հերոսները ներկայանում են ժամանակակից մարդուն հասկանալի էթիկական նորմերին համապատասխան, վեհանձնություն, սեր ու հարգանք ծնողների ու կանանց նկատմամբ, թշնամական հասարակ ժողովրդի նկատմամբ հանդուրժողականություն և այլն: Սրանով էպոսը մասամբ կտրվեց ստեղծման ու տարածման միջավայրից, ժանրին ու վիպասացմանը բնորոշ առանձնահատկություններից: Ընդ որում, եթե հորհրդային շրջանում էպոսը ընկալվում և մեկնաբանվում էր ինտերնացիոնալիզմի ու դասային պայքարի ոգով, ապա անկախության շրջանում լրիվ հակառակը՝ ազգայնական: Սակայն, զարմանալի է, որ «Սասնա ծռերի» շատ մեկնաբանություններում գրանք նույնանում են:

Օրինակ, ըստ 1930-ականների հորհրդային գրական կյանքի առաջնորդողներից մեկի՝ Ալեքսեյ Տոլստոյի, արաբ ծերունու հետ Դավթի գրուցի միջադեպում «ցնցում է ապրումների վեհությունն ու ժողովրդական երգիչների, պոեմը ստեղծողների վեհանձնությունը, հայ ժողովրդի վեհանձնությունն ու մարդասիրությունը, որ վիպասացներից այդպիսի վեհապանծ դիպաշարային զարգացում է պահանջել»¹:

¹ «Литературная газета», 1939, 10 сентября. Մեջբերումն ըստ՝ Մազա Զանփոլադյանի «Սասունցի Դավթի ռուսական կյանքը» գրքի, Երևան, 2015, էջ 45:

Կամ ըստ ժամանակի մեկ այլ հայտնի գրականագետի ու կուսակցական գործչի՝ Վալերի Կիրպոտինի՝ «Սասունցի Դավթուն» կա մեկ այլ հիանալի գիծ, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, էպոսում, որը ծնվել է ազգային անկախության պայքարում, չկա ազգայնական ատելություն...: Հայ գյուղացին նվաճող-եկվոր գյուղացիների, հովիվների, արհեստավորների մեջ թշնամի չէր տեսնում»: Վ. Կիրպոտինը խոսում է նաև էպոսում՝ «ազգային բացառիկության և անհանդուրժողականության բացակայության մասին»:

Սրան հակառակ, 1930-ական թվականների վերջի նախապատերազմական շրջանի պահանջներով էպոսի հերոսների միջոցով ատելություն է քարոզվում թշնամու նկատմամբ. «էպոսը ներշնչում է և կներշնչի մեր երիտասարդությանը և ամբողջ ժողովրդին ֆաշիստական իմպերիալիստական գիշատիչների նկատմամբ ատելության ոգով, անհաշտ պայքարի ոգով, դեպի յուրաքանչյուր թշնամի, որը համարձակություն կունենա ոտնձգություն կատարել մեր սոցիալիստական հայրենիքի սրբազան սահմանների նկատմամբ»²:

էպոսի՝ ժամանակաշրջանին և խորհրդային գաղափարախոսությանը բնորոշ մեկնաբանությունը տեսանելի է նաև 1938-1939 թթ. Մ. Աբեղյանի, Գ.Աբովի և Ա. Ղանալանյանի համատեղ ջանքերով ստեղծված «Սասնա ծռերի» ամենահայտնի՝ «Սասունցի Դավիթ» անունը կրող համահավաք բնագրում: Բուռն քննարկումների արդյունքում ստեղծված համահավաքը, թեև հիմնված է էպոսի շուրջ 6 տասնյակ բանավոր պատումների վրա, գեղարվեստականորեն ամբողջական տեքստ է, սակայն ժամանակաշրջանի պահանջով յայտեղ նվազագույնի են հասցված կրոնական մոտիվները: Ընդգծվել են ժողովրդական ստորին խավերի համերաշխության ու բարձր դասերին՝ ազնվականներին ու հոգևորականներին հակադրության, նվաճողականության բացակայության գաղափարները:

² «Коммунист», 1938, 16 октября, մեջբերումն ըստ՝ «Սասունցի Դավթի ուսուսական կյանքը» գրքի, էջ 43-44:

Այս համատեքստում կարևոր է նաև այն, թե հերոսը ինչպես է գրասերորում իրեն հաղթական մենամարտից հետո, ինչպես է վարվում պարտված թշնամական զորքի նկատմամբ: Կովից հետո Մելիքի զորքերը իրենց հպատակությունն են հայտնում Դավթին, որոշ դեպքերում անցնում նրա թրի տակով (ՄԾ, 1936, ԺԲ, 1944, 2): Պատումների մի մասում Դավիթը ազատ է արձակում Մելիքի զորքին և վերադառնում Սասուն, իսկ այլ պատումներում թալանում է Մելիքի երկիրը և թագավոր է նստում Մսրում (ՄԾ, 1936, Ե, ԺԴ, ԺԶ, ԺԷ, 1946, Թ, ԺԱ, 1951, ԻԱ):

Սրան հակառակ, 1939 թվականի համահավաքում, նաև Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմում և այդ տեքստերի հիման վրա կատարված ուսումնասիրություններում՝ ընդգծելով մեր ազգային էությունն անհարիր նվաճողականությունը, շեշտվում է, որ Դավիթը հրաժարվում է ամուսնանալ Մելիքի կնոջ հետ և իշխել Մսրում:

Մելիքի մեր ու քիմ նստան էնտեղ, վերան լացին:

Ապա մեր դարձավ Դավթին, ասաց.

– Դավիթ, սպանեցիր Մըսրա Մելիքին,

Վնա՛ս չը կա, դու էլ իմ տղան ես:

Արի, էնոր կնիկ դու ա՛ն,

Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,

Սասուն գաթի քոնն է:

Դավիթ ասաց.

– Ես մորե որ ծնվեք եմ՝ անարա՛տ եմ,

Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի:

Կուզես արի, քե կը տանեմ մոտ ինձ, Սասուն:

Ասաց.– Ձէ՛, Դավիթ, չեմ գա Սասնա էրկիր:

Ասաց.– Որ չես գա մեր Սասնա էրկիր,

Գընա, Մըսըր տվեք եմ քե, ապրի:

Դավիթ ձիու գլուխ շրջեց,

էլավ, գընաց մեջ գորհերին.

Ինչ գորհ գորական մնացե՛

Կանչեց, հրամայեց, ասաց.

- Ամենիդ իրավունք կը տամ.
Ուր տեղեն էկեր ե՛մ էլե՛ք, գնացե՛ք ձեր տեղ:
Ելե՛ք, գնացե՛ք ու ձեր տներն ստե՛ք,
Դուք ինձ համար աղո՛թք արե՛ք,
Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվե՛ք,
Հանդա՛րս կացե՛ք,
Մեկ էլ չէնե՛ք ու գա՛ր վեր Սասնա:
Մեկ էլ որ զեն՛ք առնե՛ք մեր դե՛մ,
Թե՛ որ դուք կո՛վի գա՛ր վեր մե՛զ՝
Քառսուն գազ խոր հորում ըլնե՛ք,
Թե՛ ջաղացի ջոջ ֆարի տակ,
Տ՛էնի ձեր դե՛մ Սասնա Դավիթ,
Տ՛էնի ձեր դե՛մ Թուր Կեծակի՛ն³:

Դավթի վերջին խոսքն ուղղված թշնամական բանակին՝ 1939 թվականի նախապատերազմական օրերին ամենից մեջբերվողն էր Խորհրդային մամուլի էջերում: «Մեկ էլ չէլնեք ու գաք վեր Սասնա» վերնագրով էպոսից մի հատված տպագրվեց «Известия» թերթի սեպտեմբերի 14-ի համարում: Նույն խոսքերն էին որպես խորագիր բերված «Советское Искусство» թերթի առաջնորդողում:

Սա տրամաբանական էր, քանի որ կար արտաքին թշնամի ու պատերազմի վտանգ: Էպիկական բախումը որպես կանոն ձևավորվում է արտաքին թշնամու առկայությունամբ, ներքին սոցիալական կամ քաղաքական հարցերը չեն կարող էպոսում կարևոր դերակատարություն ունենալ, կամ ընդհանրապես չկան: Սա փաստվում է «Սասնա ծռերի» չորրորդ ճյուղով ու էպոսի ավարտով. թշնամի չունեցող Մհերը հեռանում և փակվում է քարայրում:

Տարակուսելի է, սակայն, որ արդեն մեր իրականության մեջ, մասնավորապես 2016 թվականի հուլիսին, երբ «Սասնա ծռեր» գինված խմբավորումը գրավեց Երևանի Մովսես Խորենացի փողոցում գտնվող ՊՊԾ գունդը, ֆեյսբուքյան գրառումներում

³ Սասունցի Դավիթ (համահավաք բնագիր), Երևան, 1939, էջ 282:

ավելի հաճախ կարելի էր հանդիպել հենց վերևում բերված՝ Մե-
լիքի գորքերին ուղղված տողերը, որոնք կտրված էին էպոսի
համատեքստից և ուղղված էին իշխանություններին: Խորհրդա-
հայ էպոսագիտության մեջ էպոսի առանձին հատվածներ, բայց
ոչ երբեք այս հատվածը, երբեմն մեկնաբանվում էին, որպես
«նեղքին հարստահարիչների» դեմ ուղղված «դասակարգային
պայքարի» արտահայտություն: Օրինակ, էպոսի ուսումնասիրող
Գր. Գրիգորյանը գրում է. «Կեղեքիչների հանդեպ ունեցած այ-
րող ատելությունը, նրանց անխնա կոտորելու ներքին մղումը
կապված են շահագործող կարգերի մերժման հետ: ...էպոսի հե-
րոսները հասնում են այն գիտակցության, որ առանձին թագա-
վորներին վերացնելը չի լուծում ֆեոդալների և նրանցից կա-
խում ունեցող հասարակ մարդկանց միջև անհաշտ հակասու-
թյունները»⁴: Սակայն այսպիսի դատողությունները իրավացիո-
րեն որակվեցին և որակվում են, որպես էպոսի հետ առնչու-
թյուն չունեցող, գոեհիկ սոցիոլոգիզմի արտահայտություններ:
էպոսի այսպիսի ընկալման դրսևորումները կրկին փաստում
են, որ մեր հասարակությունը լավ չգիտի էպոսը: Հանրային ակ-
տիվ հիշողության մեջ «Սասնա ծռերի» մասին պատկերացում-
ները արժարժվում են դարոցական դասագրքերի, արվեստի
տարբեր գործերի միջոցով վերարտադրվող Խորհրդային շրջա-
նի սոցիոլոգիական մտեցումներով: Նույն կերպ՝ վերևում բեր-
ված՝ Դավթի հետ կապված թշնամու նկատմամբ հանդուրժողա-
կանության դրսևորումներից ծնվող եզրակացությունները տա-
րածվում են էպոսի մյուս հերոսների վրա, ինչը կրկին հիմ-
նավոր չէ:

Գեղարվեստական գրականություն-հանրային կյանք-քաղա-
քականություն, «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի
ազդեցության այս ոլորտներն ու մեխանիզմների քննությունն
է մեր ուսումնասիրության նպատակը: Եվ այս խնդիրների
արժարժումն առնչվում է մի շարք հարցերի հետ.

- Ո՞վքեր և ինչպե՞ս են անդրադառնում էպոսին: Ոգեկո-

⁴ Григорян Гр., О некоторых чертах армянского героического народного эпоса
«Давид Сасунский», 1958, с. 169:

չո՞ւմ են հերոսներին, թե՞ պսակազերծում նրանց, ապամիֆականացնում՝ բերելով կենցաղ ու արդիականություն:

- Ինչո՞վ է հետաքրքիր էպոսը ժամանակակից հեղինակներին, հասարակական-քաղաքական գործիչներին և հանրությունն ընդհանրապես:
- Ինչպե՞ս են մեր գրողներն ու քաղաքական գործիչները ընկալում էպոսը: Որքանո՞վ են նրանք ծանոթ էպոսին, թե՞ ավանդույթի ուժով վերարտադրում են խորհրդային շրջանի էպոսագիտական կաղապարներն ու պատկերացումները:
- Որքանո՞վ են գեղարվեստական ու գաղափարական տեսանկյունից արդարացված էպոսի մոտիվների, արտաարտահայտչամիջոցների, գաղափարների կիրառությունները արդիականության համատեքստում:
- Կարո՞ղ է էպոսը փոխարինել ազգային գաղափարասուությանը: Արդյոք այս ամենը բնութագրական է միայն մե՞ր հասարակությանը, թե՞ բնորոշ է նորանկախ երկրներին:

Մեր աշխատանքը, թեև իր որոշակի սոցիոգիական-մշակութաբանական խնդրառությունը, առավել շափով բանագիտական-գրականագիտական է: Աշխատանքի առանձին հատվածներում և հատկապես երրորդ գլխում մենք կիրառում ենք սոցիոլոգիական ուսումնասիրության որոշ գործիքներ, սակայն հիմնականում ձգտել ենք մնալ գրականագիտության սահմաններում: